


13117



1919

ՄԱՆԱԶԻԶՐ ԵՐԷՑ

ՈԳԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

«Ainsi d'un peuple entier je feuilletais l'histoire!
Livre fatal de deuil, de grandeur, de victoire.»
V. HUGO

«Թէ Թոյսն է հոն լայ՝ Թոյսն է ՀայուԹեան,
Թէ հոն շանձն շաչէ՝ նա ցեղիս ծայնն է,
Վայրն հաժակ արիւն՝ նա է Հայաստան...
Եւ զթիւր յաղթող՝ նա միայն Հայն է...»



ԻԶՄԻՐ

Տպագր. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1919

891.99

Մ-24

2003

ՈԳԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

«Les mères ont frémi; les vierges palpitantes,
«O calife! ont pleuré leurs jeunes ans flétris.»

V. HUGO

«Non senex, non aetas periculo vacua.»

TACITE

«O horrible! O horrible! Most horrible!»

SHAKESPEARE



ԻԶՄԻՐ

Տպագր. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1919

29478-41



ԿՐՏՍԵՐՆ ՄԱՆԱՃՀՐԱՅ

« L'oeil fixé sur ce ciel qu'on nomme l'idéal . . . »

V. HUGO

Վրէժ գոռացէր ծեր որբ փերում,
Դեռ լուռ ծխացող աւերակներին . . .

ՎՅԱՐԱՆԴԻ

ՀՈԳԻԻ, ԳԱՂԱՓԱՐԻ ԵՒ ՆՈՒԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԳԻՐ ԵՂԲԱՅՐ

Ահա 1918 ի Դեկտեմբերեան գրութիւնս է՝ զոր հրատարակել պիտի ուզեմ տալ, տեղի տալով զօրաւոր ստիպողականութեանց . . . Կը յիշեմ ամէն ինչ. բեղձն, զուտ հայական տարիներ մեզի համար. երբ դեռ զու մանկութեան, և ես պատանեկութեան սեմին վրայ կը թեւակոխէինք: Կը յիշեմ 1909-14 ը, կը յիշեմ նաեւ 1914-18 ը, ու կ'երազեմ զիմասկաւոր 1919 ը, իւր անախակալներով յղի գարունով, ամառով և թերեւս ձմեռով . . . :

Զգացում մի վնասեր այժմ իմ մօտ, զի յոյզս ցամքած է և յոյսս մեռած, թէև հոգիս նոյնն է ինչպէս քու հոգիդ, հուր և մոլեգնութիւն. սակայն սառույց է նա միւս կողմանէ, ուր զժնէ և զարհուրատեսիլ անցեալը՝ իւր մահահամբոյր թեւերը կը տարածէ հոն՝ ստեղծելով մթնոլորտ մը թունաւոր:

Ո՞ր այլ երիտասարդ իմ տեղս՝ տարրեր, յիշ, բոլորովին տարրեր երազներով պիտի անկողին մտնէր: Տե՛ս, իմ անկողինս՝ մարմնացում սուգի և գերեզմանի. . . և այս սուգն ու գերեզմանը միանալով՝ մոլեգնութիւնն ու վրէժը կ'երկնեն: Հոգիս կը փրփրի, բայց առիւծ մ'եմ չղթայուած: Ո՛վ



29478-58

կրնայ ըսել ինձ, «Ահա՛ քեզի տենչանքիդ ասպարէզը, զոր մանկութեան տարիներէն մինչև այսօր յուսախնդիրօրէն երազեցիր, քալէ՛ այս նուիրական ճանապարհէն...»: Ա՛խ, ես այդ գերբնային, աւետարել հրեշտակին յաւերժական ստրուկը կը լինիմ և կ'ոխկրտելով մեզի գեղարուեստն ու կոտորելով այս գրիչն անկար, կը սուզվիմ դէպի այդ ծիր տեսութիւնքն անըջալատ...:

Ա՛խ, կրտսերն իմ Մանածիւր, ի՞նչ կրնայ տողանցել հոս՝ նուաաստ գրիչը՝ երբ կը սնանի ան, միայն և միայն սառն ձիւնովն հոգւոյս:

Ո՛չ մէկ վայելք, ո՛չ մի երջանկութիւն, ո՛չ մի յուսատու հայեաց, ո՛չ մի զգլխի երեւթ կրնան զիս ներազել: Եթէ կայ պարադայ մը որ հոգիս կը զովացնէ, որուն մէջ կը ճըզնիմ մոռնալ պահ մը՝ մեծ սուգերս անդարման, ան ալ մի նշոյն է այն Արեւելեան Յուսարաշխ Արեգակին՝ զոր պաշտեցին մեր նախահայրերը, և զորն ես իբր Աստուած կը գաւառնիմ:

Ի՞նչ խորեմաստ գաղտնիք, և ի՞նչ հրաշալի վեհ գաղափար, մեր նախնիքը մեհաննի՛ր են կանգնէր Միւր աստուծոյն ի պատիւ...:

Այն ատեն մեր արեւելքը դրախտ մ'էր իրականապէս, այնու ատեն այսօրուան արիւնհոս գետերը կաթ ու մեղր կը բխէին, այսօրուան գիւհակներով ծածկուած ձորերը, լեռներն ու գաշտերը՝ այն ատեն ոսկի, աղամանդ և երկնեանդ ծաղկունք կը պնէին. այն ատեն անմեղ կուսանաց պարը՝ արբիւ խընկուած մթնոլորտէն՝ լուսազօծ լճակաց շուրջը կ'ոստնուէր անխրոտով՝ խառնելով իւր մեղեդւոյն թրթռուն ներդաշնակութիւնը՝ ալեաց քնքուշ մրմունջին հետ. այն ատեն բնութիւնը լոյս ու մաքրութիւն կը բուրէր. աւանդ այժմ նա՛ մահ՝ դիակ և արիւն պատկերէ...: Սէր կայ այն ատեն՝ այժմ գարշ սոնքութիւն՝ տնաւն՝ գոռոզութիւն. կարմիրը սիրոյ և բերկրանքի ազդանիչն էր այն ատեն՝ այժմ՝ նա արեւն է խորհրդանշան:

Դիտե՛ս թէ՛ մենք մեծացանք՝ ո՛չ թէ նուիրուելու գեղարուեստին՝ այլ Հրարուեստին, սակայն զգացումը մեզ հետապնդեց՝ մինչ մենք կ'անձկայինք՝ մեծ գաղափարին՝ անխոնջ ճամբորդները հանդեսանալ:

Այսօր երբ ճղճիմ, բայց համակ հուր գրիչով մը կ'իջնեմ ասպարէզ, այդ չի նշանակեր թէ մենք գաղարած եմք նուիրուել Մեծ Գաղափարին. գործելու ժամն է հոգիս, բայց ախո՛ս ամաշուժիւն է շուրջն իմ...: Ահ, կը յիշնս նոր կացի պատանին, ինչո՞ւ չի հետեւեցանք անոր — նա իրապէս ունէր Ագուլիսի հոգին, և կարծես Բաղաքի քարերն էին՝ որ զինքը ծնան և այդ դիւցազնական վայրերու անվեհեր հոգին, հազիւ թէ կ'անվոխուէր մեր այս թշուառ կտուրներուն տակ — թերեւ այն ատեն մահուան կը յաղթէինք...:

Շատ խիղճեցի. կ'ուզեմ խօսքս ընդհատել վերջարանով մը. բայց ո՞վ կ'նայ ստեղծելու այդ վերջարանը. ո՞վ որ նուիրուած է վահէվահեան մեհնին՝ թող ներկայանայ հոս, գրիչս պիտի գնեմ իւր ոտիցը տակ, պիտի ծծեմ իւր շունչը հեղէն և պիտի որոտամ: Շատ անհունօրէն շատ բան կայ գրելիք, բայց ոյժ և աւելն կը պակսին ինձի: Մեր Արեւելքին ու ձեր հրատուր սէրը գրիչս կը հրահրեն և մերթ զայն կը գործածեմ բանտուած մոռնչներս հանդարտեցնելու: Յաճախ կ'ողջունեմ արշալոյսը՝ գրասեղանիս վրայ, արտասուտ աչիւնով և զայրացած հոգւով, այգուն, ո՛չ մէկ երջանիկ առիթ՝ սուգս փարատող:

Կը խորհիմ յաճախ, ի՞նչ կազմ երկաթեայ, որ չի մաշիր վերջնականօրէն, կամ մարդ չի մտակորուսիր, կամ չի՛ անէանար. ո՞վ է որ պիտի կարենար չնչել այս ծանրածանր վշտերուն տակ ճնշեալ, սակայն յայտնի է քեզ՝ ո՞վ խոհունդ կրտսեր՝ թէ ինչ թագուն գորութիւն մ'է մեզ դէպի կեանք առաջնորդող...:

Կ'երկարեմ ձեռքս խաւարին մէջ, երկարէ՛ և դու, ու թող այս միացումը, Յուսոյ Շանթը երկնէ՛ Գեղեցիկ և Ահաւոր...:

Արեգակն, 6 Քաղոցի, 4411

ՄԱՆԱՃԻՐ ԵՐԷՅ

(Էլիպոս)



ԱՌ ՔԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

«Պառնուկի պէս անմեղ եղիք՝
խսկ օծեալ պէս խորամանկ»
ՅԵՍՈՒՍ

Ներքէ՛՛ ո՛վ Յեղափոխութեան վեհադոյն Գործիչ՝ անպարտելի ախոյեան Հայ ազատագրութեան ընդվզումի ճանապարհին՝ երբ այս կէս գիշերային անաւոր ու խաւարայեղ լուծեան մէջ՝ ճախր կ'առնու հողիս, դէպի հայրենի ազատ երկիր, դէպի Կովկաս, դէպի Նոր - Նախիջևան:

Ա՛հ, բիւր անգամ ներքէ՛ ինծի՛ երբ ես մի թշուառ հիւլէ, կը յանդգնիմ դալ և զերեզմանիդ հիւ երը սարսել . . . :

Դիտեմ, գիտեմ որ արդէն, քանի քանի անգամներ, այդ վեհաշուք դամբարանիդ մէջ նիրհդ վրդովեցաւ. քանի քանի անգամներ ոգիդ թափառական դարձաւ հայրենիքիդ ձորերուն մէջ ու ժայռերուն վրայ, իբրեւ մի խորհրդաւոր ուրուական՝ երբ տեսաւ ամէն անգամ, որ մայր երկրիդ նուիրական ծոցը օծերու և կարիճներու ասպնջական է դարձեր:

Ահ, անհունօրէն ինքնակորոյս, բազկատարած և ծնրադիր անա այդ հսկայ մահարձա՛իդ առջև ուխտի եմ եկեր . . . : Ինչպէ՛ս կարող էի գամուած մնալ հոն՝ արեւմուտքի անզգայ խորքերուն մէջ, երբ հայը իւր անհաշտ թշնամին անկարող դարձաւ ճանաչելու . . . և իրեն կարկառուած ամէն ձեռք կը սեղմուի և ջերմեռանդութեամբ կը համբուրուի, պայծառ ու որ օտարի՛նը լինի այն . . . : Դարաւոր, ու դարաւոր աղիտալի փորձութիւններ զեռ հայուն հողոյն մէջ՝ ինքնա-

գիտակցութեան այդը չկրցան ճառագայթել: Հայը իւր հող-
ւոյն մէջ արծարծուող «օտարամոլութիւն» կոչուած ախտին
մնայուն ստրուկը, զայն յագեցնելու համար, քանիցս իւր
գահն իսկ վրայ տուաւ և որ դառնագինն է, զեռ . . .
չի զգաստացաւ:

Փոյթ չէ, մոռնանք — եթէ երբէք մարած է մեր մտածո-
ղութեան մէջ յիշողութեան կրակը — զեռ վերջին անգամ
իթթիհատի վո՛մակին կարկառած ձեռքը հողէին գրկելով՝ Ա-
տանայի ջարդով վարձատրուած ըլլալնիս: Երթանք
քիչ մը հեռուն, դէպի տոհմային պատմութեան խորերը և
տեսնենք թէ անխոհմութիւնն ու օտարամոլութիւնը քանի.
ներդ՛ նստած են մեզի . . . :

Եթէ՛ Արտաշիսեան հարստութեան հիմնադիրը Արտաքսիաս
Ա., որուն դու կ'անուանես Արտաշէս Աշխարհակալ, պարսկաս-
տանը գրաւելէ վերջ Յունաստանն ալ նուաճեց, բնիկ ժողո-
վուրդը դարձուրած հայուն զօրութեան առջև, իսկոյն թագաւ-
որիդ անուան արձան մը կանգնեց և պաշտեց զայն՝ իբրեւ
Աստուածներու Աստուածը: Յետոյ Արտաքսիաս ուղեց
զրոհ տալ դէպի Հռոմ, որ խռովեցաւ, սասանեցաւ և ճառ
մը մտածեց Արտաշէս պիտի մտնէր Հռոմ, յաւիտեական
քաղաքը պիտի լինէր իր երրորդ «Արսաֆսի - Շաս»ը, և
ամբողջ Եւրոպան պիտի ընդհուպ հայ բռունցքին
առջև խոնարհէր: Դիմադրել Մեծն Արմէնիոյ՝ զինու
զօրութեամբ, անխոհմութեանց անխոհմութիւնը պիտի
լինէր այդ պէտք էր ուրեմն զաւաղել. Հայ բանակին
մէջ կը վխտային հայերէ զատ, գերի ու հպատակ քիւրաւոր
զինորներ: Պարսիկ, Կապադովկիացի, Լիւդիացի, Յոյն, Մա-
կեդոնիացի եւն եւն. և անա Արտաշէս կ'սպաննուի իր իսկ
զօրացը կողմէ:

Նոյն հարստութենէն Մեծն Տիգրան Բ. որուն օտարները
անուանեցին չէհնչահ = Արքայից արքայ, երբ փոքր Ասիան
նուաճեց, 12 քաղաքաց, Կապադովկիացի, յոյն եւն. ազգերէն
բաղկացեալ 300 հազարնոց ժողովուրդը, բերաւ ընակեցուց
իւր նորակարոց Տիգրանակերտ բերդաքաղաքին մէջ, ամէն
աջակցութիւն չզլանալով անոնց, իսկ երբ հայութեան մէկ
անպատրաստ վայրկեանին՝ Հռոմայեցիք զայն պաշարեցին,

Հայուն չնոր՝ վայելած, տեղացի օտար ժողովուրդը, առանց ամենադոյզն իսկ ղեմադրութեան՝ վատարար բերդին զոները բացաւ Լուկուլլոսի առջև, որ զայն հիմնահատակ բրաւ, թէն մատնիչները իրենց արժանաւոր պատիժը գտան և Հայք վերադրաւեցին բերդաքաղաքը, բայց կորսուածը կորսուած էր:

Առնենք մի ուրիշ օրինակ ևս, քու յաղթապանծ թագաւորդ Տրդատ Բ. ըստ Հայ պատմութեան խոսքով Մեծ Ա. երբ Արտաշիւր Սասանը պարտութեան մատնելով, զայն միջև Հնդկաստան հալածեց, ի նշան Հայ յաղթութեան և Հայ վրէժին յագեցման Պարսկաստանի սրտին վրայ քաղաք մը կանդնեց, և անուանեց զայն Դա՛ ի վրէժ:

Ջախջախուած ոսոխը երբ համոզուեցաւ թէ անհար է Հայը ընկճի պայքարի զաշտին վրայ, Անակ Պահլաւունին դրկեց Հայաստան, որ իբրեւ թէ փախստական Արտաշիւրի կողմանէ՝ եկաւ Հայ արքունիքը, պատուեցաւ. և յետոյ մանկաւիկութեամբ և խարդախութեամբ սպանեց քու թագաւորդ, զէնքը չի կրցաւ վնասել քեզ, կեղծաւոր օտարին հաւատ ընծայելով տունդ քանդուեցաւ: Երբ Արեւելեան Հռովմէական կայսրը համոզուեցաւ թէ քու քաղաքներու դշխոյ Անիդ անկարելի է բանի դրաւել, երբ տեսաւ որ Ախուրեան գետը Հռովմայեցիներու և ասոնց հպատակ՝ Յոյներու արեամբ յորդեցաւ, գացող Լէզէոնները ալ ետ չի դարձան, Գագիկ Բ. թագաւորիդ հետ հաշտութիւն կեղծեց, Վախճանը, ահ, այն աղետաւոր վախճանը, զահը կործանեցաւ . . . :

Դեռ չա՛տ ցաւալի վկաներ քու պատմութենէդ, նոյն իսկ քու առօրեայ կեանքէդ: Ո՛վ հէք Հայութիւն, քանի՛ քանի անգամներ քու զեկալարներդ քեզ մատնանչեցին քու թշնամիները, քու դարաւո՛ր թշնամիները, որոնց նենդութենէն խաբուելով՝ այսօրուան վիճակիդ հասար, և բոլորովին պիտի կործանէիր: Եթէ Հայութիւնը իւր ծագէն չի հանեւ այն նուիրական դիւցազանց խոււքը, որոնց առջեւ աշխարհի մեծ հոգիներուն հիացումը խոնհարեցաւ, եւ ի՞նչ վեհաբանութիւնը իսկ խոստովանեցաւ. և դու այսօր տխմար յամառութեամբ մը կ'անաստես քու մեծերուդ, անձնուէրներուդ խրատը, կը պատժուիս, կը խեղահասիս և դարձեալ կը մոռ-

անա՛ս . . . : Ո՛վ Հայ, կորդէ հոգւոյդ խորքերէն այդ օտարամոլութեան որոմը, և ահա մարդ ես, յաղթո՛ղ ես, երջանի՛կ ես: Ո՛վ ուսոյց քեզի՛ սիրել քեզ թշնամի, նուիրականութիւնդ անարգող, մեծութեանդ առջև կուրացող՝ օտարը: Սակայն ինչո՞ւ չի սովորեցուցին քեզի սիրել և պաշտել նաեւ քու ազգակիցդ, քու ցեղիդ զաւակը, որ քու արիւնէդ արիւն և ոսկորէդ ոսկո՛ր է: Ո՛վ ըսաւ քեզի թէ մեծ են քու ոսոխները, երբ ահաւասիկ անոնք բոլորն ալ անբարոյութեան, վատդարութեան և կեղծիքի տիղմերուն մէջ կը տապալկին . . . : Օգուտ չունի գրիչդ որ կը շարժի, սուրդ որ կը շողայ, արիւնդ որ կը հոսի, դարձիր դէպի օտարամոլութիւն և ահա ամէն ինչ կը ցնդի:

Ահ, ի՞նչ է սակայն որ կը շարժէ այս արձանը, ի՞նչ գերնային բանդադուշանք և ի՞նչ հոգեցունց զորդիւն է որ կը լսեմ համը ու սառած այս մարմարին ընդմէջէն...: Ոգիներն են որ կը յառնուն, և կամ գերեզմանը զիս կախարդեց . . . ինչ է այս, Բամա՛ռ, Բամա՛ռ . . . գէթ խօսէ՛, խօսք մը, վանկ մը թրթռացուր և այս արհաւիրալից և խորհրդաւոր լուծիւնը թո՛ղ մեռնի:

Նոյն պահուն շանթ մը փայտաւեց պատկառելի մահարձանին ճակտին վրայէն, ոյողեց զայն խորհրդաւոր լոյսերու մէջ և ես կրցա՛յ տեսնել մի հրեղէն ձեռք բռնած մի շանթակուռ ահագին թուր որուն մէկ կողմը կրցայ յստակօրէն կարդալ Բամառ Բաթիպայի սքանչելի ոտանաւորներէն մէկուն վերնագիրը՝ Առաջադրութիւն իսկ միւս կողմը նահատակ դիւցազանց անունները, որք Հայաստանի անկախութեան համար մեռան. որոնց քով շարուած էին նաեւ այն ողջ և հրաշագործ քաջերուն անունները՝ որք այն նուիրական նահատակաց հետ՝ Գերմանիոյ, Թուրքիոյ և նմաններու ճաշակել տուին հայութեան մշտագոր բունցքը, և ներկայ Արարատի անկախ հանրապետութիւնը կանգնեցին, զայն օժտելով յաղթութեամբ և փառքով: Ասոնց անսխալաբէ տակը կարդացի Արտասահմանի և Թուրքիոյ ազգալին մեծ և անձնուէր գործիչներու ցանցա՛ռ անուններ:

Թողելով հանելուկիս ճիշդ լուծումը խորաթափանց և ուժ-
չիմ ընթերցողաց՝ կը հնամ դեռ բազկատարած այդ մեծ մար-
դուն՝ հսկայ մահարձանին ստորոտը, ծնկաչոք և աղերսագին՝
մինչև հայը ճանչնալ կարողանայ իր դարաւոր ոսոխներէն 4
գլխաւորը կամ թէ միմիայն մէկը օտարամոլութենէ խոյս
տալու ճամբան՝ ես հո՛ն եմ դեռ . . . Պատկանեանի Ոգւոյն
սուգերուն մասնակից . . . :

Նրանօրօսքիւն.— Այս նամակը կրճատումն է՝ այն անստորագիր և
ընդարձակ գրութեան, զոր ուղարկուած էր մեզի անձանօթ պարագաներու
կողմանէ՝ զրի առնուած կովկասահայ բարբառով, Մենք անկէ փոքր մաս մը
սիայն՝ արեւմտահայերէնի վերածելով, կը ներկայենք խուզարկու ընթերցողին
ուշադրութեան: Արդէն այս զրբոյկը ևս կրճատուած է, մենէ բիշ մը անկախ
պարագաներու տակ և ժողովրդեան մտքին մատչելի ընծայուած:



Մինչեւ որ պաօգամ գայ հին Մասիսից
Թէ Հայն ցեղն ամբողջ կեցել է ոռթիս

ՎՏԱՐԱՆԴԻ

Ով որ ալ լինիս ըրթերցող ո՛ւշ դիր,
Կաբղա՛, խորունկը սուգէ տողերուս,
Ո՛չ գեղօն է նա, ո՛չ քերթուած պատիր,
Ո՛չ ալ փառերգող քնար գեղահիւս:

Հոն յոյսն է կուլայ, որ նորեկ դարու
Սե անցքերուն մէջ՝ կարմիրներ ծնաւ.
Հոն կայ՝ մոլեգնած երկաթ կամք մ'արու,
Եւ իւր առաջն կանգուն մ'անհուն ցաւ:

Հոն՝ բզկտուած տեսիլ մը կայ ջինջ,
Ուր խորչակն իւր ահաղանդով մութ,
Բախեցաւ՝ ամէն ոյժ դարձաւ ոչինչ,
Երկինք զլացան մենէ՝ դոյզն ինչ գութ:

Հոն սոսկ անձի մը երազը չէ՛ որ,
Կենաց ու մահու տուայտանքին մէջ,
Ճարտարարուեստ մը չքեղ փառաւոր,
Գեղակերտէ՝ յուշ անցքով մը անչէջ:

Հոն սին փառքերու տեսչանքը չէ՛ որ,
Պիտի այլաբան զաղափարներով-
Համայնքին առջև դերթ տաղանդ մ'հզօր,
Յցուի անուան մը զոհը դառնալով:

Թէ յոյսն է հոն լայ՝ Յոյսն է հայութեան,
Ամպրոպն որ գողայ՝ նա՛ ցեղիս ձայնն է,
Վայրն համակ արիւն՝ նա՛ է Հայաստան,
Եւ Զոհը Յաղթող՝ նա միայն Հայն է:



Թող քիչ մ'ալ թշնամիին արիւնը գայ
մեր այգիները ոռոգել եւ մեր սրունքները
թրջել։

ՍԻԱՄԱՆԹՕ

Թէ վսեմ վայրին պարսպաց առջև
Միշտ անհամարձակ կայ մի ուխտաւոր,
Որ բազկատորած, ծնդնած հե ի հե
Համբոյր տայ հողին, Վէմին փառաւոր։
Սիրոյ, հասնումի գամէ ակնարկներ
Դէպ' հսկայակերտ պատնէշներն այդ.
Ու յանկարծ կարջնեղ բռունցք մ'անսկիւն
Անձանօթին դէմ՝ ցցէ. բարկաճալթ։
Հարցուր քու հոգւոյն թէ ո՞վ է այդ անձ.
Ակնարկ ու բռունցք ինչ կ'արտայայտեն.
Ակնարկ ու բռունցք վրէժներ անսանձ.
Մին դէս կը շանթէ, միւսը՝ փշրէ դէն։



Վանդի տեսած էր որ իւր սիրօր
հազարաւոր կուժքերու քակ նոյն վրէժը
կ'որոտար։

ՍԻԱՄԱՆԹՕ

Եւ սակայն ժողովրդական ցասումը
սահմաններ չի ձանդաղում։

ԳՆԹՈՒՆԻ

Կէս գիշեր անա սև վշտերուս տակ,
Գրասեղանիս առջին լո՛ւռ խոկամ,
Հոգիս կը տապէ մի դառն յիշատակ.
Ահ, կը ստածեմ հէք Մայրն Հայաստան։

Ծուղկերու մէջը սուգած եմ խորունկ,
Որոնց մէն մի տողն արիւն կը բուրէ,
Ու յանկարծ կ'առնում մեհեաններու խունկ.
Որ Հայաստանի հեշտ սիւքը բերէ։

Նոր ոգի կ'առնու հոգիս պարտասած,
Քունն աչերէս շատունց խուսած էր.
Հոգւոյս մէջ կ'զգամ կ'ուրձանայ մ'աստուած.
Խոհերս համայն կը դառնան քուրմեր։

Ահ, նոր փառքերու աւետիսն է այն,
Խունկը լուսարօյր, խունկը գերբնային,
Մասիսի գլխին Յաղթ Գոյնեռն պանծան,
Զարթոնքին նշան Հայկայ Արեւին։

Բայց խունկին մէջ այդ կար բուրումն արեան,
Կարմիր օրերուն ն'ա սուգը գուժէր,
Վիրաւորուած էր ամբողջ Հայաստան,
Նա միայն վատի՝ արեամբ պիտ' բուժէր։

Ի՞նչ է այս ըսի, ի՞նչ ճակատագիր,
Ի՞նչ դժնէ սե բայիդ՝ վայրագ երկրագունդ,
Հրճուի՝, երբ հայը դառնայ տարագիր,
Մէջը Հայ արեան՝ գտնէ իւր սնունդ։

Կատաղութի՛ւն մը յանկարծ գիւ բռնեց,
Ու մոլեգնեցա՛յ վայրենւոյ մը պէս,
Ըսի ալ բա՛ւ է Հայն արիւն թափեց,
Մխուրնք խաւարին սիրտը շա՛ւի պէս։

Հոգ չէ թէ խաւարն այդ ըլլայ անհո՛ւն,
Թող Հայ անունը՝ զարհուրանքին հետ,
Նոյնանի՛շ ըլլայ։ Սարսափ մը անքուն,
Դառնայ մէն մի Հայ՝ արի՛ւն խմէ յաւէտ։

Սակայն մի՞թէ՛ այս ձևերով վայրագ,
Հայ անունն պիտի բարձրացընենք վեր,
Քանի որ երբէ՛ք Հայկայ Արեգակ,
Ճակտին վրայ իւր՝ բիծ չէ՛ ունեցեր։

Նա միակ ազգն է Արեւելքի մէջ,
Դրօշակիրը՝ մեծ գաղափարին,
Արշալոյս մըն է Հայ հոգին անդէջ,
Ուր ամպ ու խաւար տակաւ պիտ' մարին։

Խոլմանց մէջ այսպէս՝ երբ խորասուզած,
Յիշողութիւնս ալ բոլոր կորուսի,
Ինքզինքս երբ գտայ վերացած,
Զգացի չողիւնն մ'արտակարգ լոյսի...։



C'est qu'une grande voix dans ma nuit
m'a parlé .

V. H.

. . . Յանկարծ առաջիս ծեր մը ցցուեցաւ,
Ծեր մը վեհափառ ու պատկարելի . . .
Ծեր մը ալեհեր . . . հոգիս սարսեցաւ,
Տեսա՛յ . . . ինձ կ'ողղկէր մ'ախարակ ժպտալի :

« Ո՞վ ես » հարցուցի վախէս դողահար ,
Ու դիտեցի որ կայլակներ կային
Սչքերուն մէջը . հեծք մը հրավառ ,
Դուրս ժայթքեց սրտէն՝ փողոք գերբնային :

Նա մտասեւր աչերն ուղղեց վար ,
Կարծես իւր առջև անդունդ մ'էր բացուած ,
Ու հոն կ'որոնէր յիշատակ մը վառ ,
Այնքա՛ն սեւերուն . այնքա՛ն սգազգեստ :

Ու մխեց ակնարկն մէջը աչերուս ,
Նուա՛ղ հայեացքով , ժպտով մ'աւերակ ,
Կարծես բաներ մը փնտռէր մէջն հոգւոյս ,
Պիտի գտնէր հոն փոքրիկ ու մը տալ . . .

« . . . Ի՞նչ ունիս » ըսի քո անհամարձակ ,
Խեղդուկ հնչիւնով՝ « ծե՛ր համակրելի » .
« Ի՞նչ կ'արտայայտէ տեսքդ սուգ համակ ,
« Ի՞նչ կ'արտայայտեն աչերդ սգալի » :

« Ի՞նչ կ'արտայայտէ , տեսքս սուգ համակ ,
« Դու քաղաքացի մեղկացած տղայ ,
« Ինչո՞ւ աղղէր քեզ վիշտս անյատակ ,
« Կը հասկընա՞ս երբ երկին կ'որոտայ . . . »

« Դու Հայաստանի գետին ու ժայռին
« Հարցուր . — Ինչո՞ւ էք կամրացած այսքան ,
« Ու պատասխաններ պիտի միշտ խուսին ,
« Քանի անծանօթ է քեզ մեծ սուգն այն :

« Հարցուցի՞ր երբեք երբ դեռ երէկ էր ,
« Դիփխք դարձան Հայ - երգերը ողջիւն ,
« Յուսահատութիւն՝ երբ երկին կ'երկնէր ,
« Ու մահ մը ճիւղող զահանգէր արիւն :

« Մինչ դու սենեկիդ միայնութեան մէջ ,
« Լուռ խոկումներուդ յաւերժ անձնատուր ,
« Յաւերու մէջը տապեցա՛ր անշէջ՝
« Քրնացընելով երազներդ հուր :

« Ննջեցիր երկա՛ր , ննջեցիր ընդ մի՛շտ ,
« Ո՛ւր բազումն այն ազատարարի ,
« Իջնա՛ր գանկերուն վրայ ամբարիշտ ,
« Զարհուրեցընէ՛ր հողին սանդարի :

« Ա՛հ , այդ Սանդարը՝ չ'արժէր հայորդի ,
« Այդ աղիտաբեր անունն հոս կրկնել ,
« Հոգիս քայքայող այդ անունն վատի ,
« Երբ ողջ ցեղս է անկէ լլկուէր :

« Ու՛ր , ու՛ր էիր ա՛հ , այն սրտակեղէք
« Սարսուռ պահերուն՝ երբ տիեզերքն իսկ ,
« Անդթութեան մէջ իւր , գոչեց մեզ « հէք » ,
« Գլթա՛ց վիճակին մեր յոյժ ընկեցիկ :

« Սիրելիքն մեր կորե՛ր են անդարձ .
« Եղու՛ք , սփովանք մեզի ա՛լ չ'կայ ,
« Անկողինս հող ու ժայռն է ինձ բարձ ,
« Եւ ամայութիւնն՝ ընկերս մշտակեայ :

« Զու՛ր , գու՛ր կ'ապաստեմ յոյսի մը չքնաղ ,
« Սրչալոյսի մը , բերկրանքով օծուն ,
« Ուր պիտ' յագենայ՝ վրէժի անսուաղ ,
« Ուր պիտի տեսնեմ ծով մը վա՛տ , արիւն :

« Բայց , աւա՛ղ , ով կայ , այդ գերերջանիկ ,
« Պահէ իսկ աւետող՝ հայ մը հարազատ ,
« Յնցուէ՛ Հայորդի , շանք մը ազդեցիկ ,
« Դարձի՛ր , անդնդին մէջ չողա՛յ ազատ :

« Անկարող դարձար վիշտս մեղմնուլ ,
« Ո՛վ երկչոտ տղայ , ուխտդ գրծեցիր ,
« Վատի անտուկը դարձար միշտ հլու ,
« Հայկայ անունդ վախճով պահեցիր :

«Պարտ էր քիչ իջնալ արծալ համարձակ,
«Դէպի պայքարի ասպարէզը սուրբ,
«Պէտք էր դառնայիր վրէժ ու կրակ,
«Շանթէիր վատի հոգւոյն մէջ ընդհուպ:

«Մինչ դու մեղկորէն փախա՛ր, հեռացա՛ր,
«Կրակներու մէջ էր երբ Հայաստան,
«Գերադասեցիր կեանքն այս բախտահար,
«Զլացար կաթիլ մ'արիւն հա՛յ անուան:

«Ես Հայաստանի Ոգին եմ ի սուգ.
«Կ'ողբամ՝ դառնաղէտ մահն հա՛յ մայրերու.
«Դեռ յիշմ Հայկայ կուսանց արցունք.
«Յիշմ հայորդին որբ անուան հլու:

— Ըսէ՛, հայցեցի, ու այդպէ՛ս դատէ,
Ես ա՛լ քեզի պէս, թշուա՛ռ մ'եմ անկեալ,
Հեղ մ'ալ նայէ ինձ վիշտս փարատէ,
Ամնարկներովդ քու լուսածաւալ:

— Կանգուն կամ, ո՛վ ձեր, բռունցքս է գործուն,
Դու հրամայէ՛ որբ-հայուն անուամբ,
Պիտի թոյն դառնամ՝ մէջ վատի հոգւոյն,
Ու պիտի ցրուեմ խորհուրդներդ ամպ:

— Ամպոսպի մը մէջ ես պիտի խեղդեմ,
Հոգին խաւարին, բախոն խելագար,
Այս վայրերուն մէջ պիտի՝ կանգնեմ մ'եղեմ,
Դու պիտի դառնաս մ'արքայ յուսաւառ:

«Սակայն ու՛ր էիր, երբ վայրերն այս
«Գարշապարներու գարշ՝ կոխան դարձան,
«Երակներուդ մէջ երբէք հրավազ
«Բոց մը չի սողաց, այդն վրիժացան:

«Կ'անգնէ, վեհացի՛ր, հա՛յ մ'ես խորհէ դուն,
«Որտա՛յ ահեղ, մ'ոնչէ անահ,
«Ասպարէ՛զ նետէ ոյժերդ թագուն.
«Ու թող սարսուռս առջիկ՝ նոյն խոկ մահ:

Կրկին աչացս մէջ միեւն՝ ակնարկն իւր,
Ու վայրկեան մ'այսպէս քարացած մնաց,
Կարծես կ'որոնէր աչքս մի այլ հուր,
Վեհ, նուիրակա՛ն, հայկեա՛ն, ուխտուած:

Ու ոգի առաւ հետզհետէ ան,
Աչերն դարձան շանթակոծ երկինք.
Պատկերացնէ՛ր կարծես Հայաստան.
Իւր հառաչն իսկ էր՝ կրակուած մորթի:
Հայն չունէ մը առաւ անհե՛ղ ձերունին.
Դիտեց սարսելու աստիճան ինձ լաւ,
Մինչ ընդարմացած կայի ես լոխ,
Կանգնեցա՛ւ ոտքի, այսպէս խօսեցաւ:

«... Իմ անունս է փառասուն յորս դար,
«Ո՛վ հէք Հայորդի, ամփոփէ զքեզ,
«Իմ անունս է վա՛յ, սո՛ւգ անդադար,
«Եւ կամ թէ ցատում, վրէժ հրագէս:
«Թող Արարատի բարձունքն հնաւանդ,
«Թո՛ղ Արմաւիրի սոսիներն խորհուրդ,
«Թո՛ղ Արաքսներու կոհակքն անկաշկանդ,
«Ասո՛նք գեղգեղեն, քնարքն մշտաթունդ:
«Ե՛կ, մերձացի՛ր ինձ, ու զիս լա՛ւ ճանչցեր,
«Ես սեւ ցաւերու աշխարհեմ կուգամ.
«Ես արիւններու ուղիէն կարմիր,
«Քեզի՛ կը զիսեմ որ հետդ սգա՛մ...»

Ու ձիւքը մեկնեց ձերունին ինձի,
Աչքերուն մէջը կամք մը կար հրդեհ,
Թերեւս խորքը կ'այրէ՛ր կ'սկիծի
Սեւ հուրքը, բայց ին՝ արտայայտանք վեհ:
«Սօսէ՛ ըսաւ ինձ, անցեալը յիշէ,
«Որոշումներու գիշերն է այսօր,
«Ուր սիրտդ զրկես, քեզ համար փո՛ւշ է,
«Իսկ յոյ՛ս ուր կ'իշխէ՛ բռունցքդ հզօր:
«Հա՛յ դու, որոշման գիշերն եւ այսօր,
«Զե՛ս յիշեր վերջին եղեանը արիւն,
«Միշտ հոգի ճմլող, և միշտ ահաւո՛ր.
«Ու ապրի՛ անարգ դեռ... դահիճն հայուն:
«Նոր հարսե՛ր կային, սրբակեաց կոյսեր.
«Որոնցմէ չատե՛ր... Ա՛հ, գուշակէ՛ դուն,
«Անոնցմէ շատե՛ր յիշերն են ելեր,
«Ու զահալիճի՛ր մէջ անդունդներուն:

12572-58



«Այսպէսով փրկե՛ր են պատիւն հայ .
 «Շատ մը հայ—մայրեր ինկա՛ծ, անձնասպա՛ն,
 «Ծծկեր մանուկներ ջարդուած անխնայ,
 «Դարձան, աշխարհ, ծով, գետ, հայ — գերեզման :
 «Հարուածն հիմանդ եկաւ այս անգամ,
 «Ո՛վ հէք հայորդի, կանգնէ՛, վեհացի՛ր,
 «Ժայռի ու շանթի դարձիր բարեկամ,
 «Վատութեան գլուխն, իբրեւ լախտ իջիր :
 «Ինչ ներս մըն է՝ քու և ընկերներուդ,
 «Քունը անյատակ, որ չի դըրդիր,
 «Երակներու մէջ արիւնը երուտ,
 «Հայկայ գաւկաց բոցեղ հրալիր :
 «Ո՛ն, արի, կանգուն . թող ձեր առաջն,
 «Սարսին ժայռ ու ձոր, անդունդներ դողա՛ն,
 «Թող ձեր ճակատէն ցնդի արատն սև
 «Սարուկի, վատի և անպատուութեա՛ն :
 «Տե՛ս, ձե՛զ կը կանչեն զիականքն ինկած,
 «Ուր պատկերանայ մահացումն խուժողութ .
 «Տե՛ս, ձե՛զ կը հայցեն, ոսկերքն փչա՛ծ .
 «Ձե՛զ կ'աղաղակեն՝ կիսամեռֆն վաճառժ :
 «Տե՛ս, հաւատափոխ բազում մանուկներ
 «Մուհամմէտներէ՛ն չնորհ կը հայցեն .
 «Հէքե՛ր, կարծեն թէ իսլա՛մ են ծներ .
 «Հա՛յ են . հայն իրենց՝ ոսո՛խ կը կարծեն :
 «Ո՛վ հայ, զարհուրէ՛» ու թեևս ցնցեց .
 «Խշխշալ չունի՞ հողիդ քարացած .
 «Հայ հողի՛ն ես ես, բա՛ւ հայը հեծեց .
 «Հատակերայի՛ր թե շանթանայ անսանձ :
 «Բի՛ւ, ու բիւր բիւրեան գողգոթաներ սև
 «Հայաստաններու մէջը բարձրացան .
 «Ուր խաւարեցաւ հայութեան արեւ .
 «Որոնց վրայ՝ հա՛յ աչեր մթնցա՛ն :
 «Որոնց վրայ՝ հա՛յ չրթներ ցամքեցան,
 «Ձու՛ր երկիններէն աղերս հայցելէն .
 «Ուր զիակ մը կար, հայութեանն էր այն .
 «Ու գիականքը ձորե՛ր լեցուեր են :

«Ու զիականքը լեռնե՛ր են կազմեր,
 «Ու զիականքն այն Հայոքեանն էին,
 «Ու զիականքը ի՛նչ անհուն շարքեր,
 «Գազան ու թռչուն հոն յափրանային . . . :
 «Ուր որ արիւն կար՝ հոն Հայն էր ինկած,
 «Քիչ մնաց, աշխարհ Հայուն արիւնով ,
 «Պիտի խեղդուէր . . . և ալ անկասկած ,
 «Հայ — արիւնն՝ երկինք ժայթքէր մշտախոռով . . . :
 «Հայորդի, գիտցի՛ր, ո՛չ մի ազգ այսպէս ,
 «Դարերէ ի վեր չի մորթուեցաւ ,
 «Ո՛չ մի ազգ այսպէս վանդալի մը պէս ,
 «Ազգի մը գլխուն չի ձիւաղացաւ :
 «Ծխադիւն ընդդէմ վիշապացիի դուռ ,
 «Ձարհուրացնելով զգետնէ գնա ,
 «Տապար մը դարձիր մահու մշտարթուն ,
 «Հարուածէ՛ ուր որ վատ մը կը սողայ :
 «Տե՛ս, գերեզմաններն ձե՛զ կ'աղերսարկեն ,
 «Գերեզմաններ քիւր, ինկած հայութեան ,
 «Մտածումներդ շանթ՝ կայծակ գրկեն ,
 «Յագենա՛յ վատի արեամբ Հայաստան :
 «Խոհերդ ողջիւն թող փայլատակեն ,
 «Թէ ո՛չ՝ անէ՛ծք կայ դրութան Հայուն ,
 «Դժո՛խք, հո՛ւր տեղայ հող չէ երկնքէն ,
 «Մշտավառ մ'իբրեւ շանթ հողէնէ՛ դուն :
 «Ոսոխի արեան ծարաւ չիրիմներ ,
 «Քիւր չիրիմներ՝ Հայ — նահատակներուն ,
 «Ներշնչուէ՛ ինէ, գրէ՛ անվեհեր ,
 «Բոլոր Հայութեան նոր կո՛չ մ'ուղղէ դուն :
 «Սգաւոր հայուն նոր կո՛չ մ'ուղղէ դուն ,
 «Համակ սեւազգեստ ներկայանայ քեզ ,
 «Ոտից ցզլուխ զինուած , փրփրուն .
 «Որ գժոխներէ՛ն շանթեր է կարծես :
 «Ոսոխ գանկերուն վրայ պիտ՝ շանթէ ,
 «Սուրբ մոլեգնութեամբ մը արբենալու .
 «Դարաւոր հայ—ցա՛ն զգենալու է .
 «Հայուն դարաւոր վրեժն լուծելու :



6

«Ե՛ւ շանձերու, շանձերու, շանձերու պէս,
«Գէ՛օք է շողաք, պէ՛օք է շողաք այն ասեմն,
«Եւր չայ արինը անմեղօքէն օր մը հոսի...»

ՍԻԱՄԱՆԹՈ

Ազգիս արժանաւոր Հայ զաւակացը հետ դէմ յանդիման

Այս գիշեր մտածումի, ընդվզումի և նուիրումի գիշերն է ո՛վ Հայ:

Ահաւասիկ զերեզմաններն անվերջ, դիակներն անհատնում և արիւններն ծովածաւալ:

Այս գիշեր մոլեգնումի և փրփրումի գիշերն է Հայկակ:

Տե՛ս երկնի հրավառ գունտերը՝ ցեղիդ կրակուած հաւաչանքներէն են զանգուեր:

Որովհետեւ անոնք քու ցեղիդ յուսահատ հոգւոյն խորքերուն մէջն է որ կուտակուեցան և հրաբուխ առ հրաբուխ դէպի երկիններն արշաւեցին:

Այդ անգութ երկնակամարին սառած կուրծքը փարատելու համար:

Այս գիշեր ահաւոր զայրոյթի և եղեռնական կատաղութեան գիշերն է ընկեր:

Ա՛լ կը բաւէ որքան սենեկիդ լուսթեանը մէջ, յուզումնալից դաշնակներու առջև:

Սիրահալ կոյսի մը երազներէն տարուեցար:

Այդ մթնոլորտը ժանգոտ է քեզի համար:

Եւ այդ կոյսը անարդա՛ր է քեզի:

Որովհետեւ այդ աղիողորմ ճիւղերը Հայ բարբառով է որ կը զանգեւնեն և այդ աղէկտուր հառաչանքները քու հոգւոյդ մէջն է սոսկ որ կրնան թարդմանուիլ:

«Ու դու կոչ մ'ուղղէ. և ոչ մ'իսկ վայրկեան,

«Յամենայու չէ. զի ժամ է գործի,

«Վրէ՛ժ կ'աղերսէ հայուն գերեզման

«Վրէ՛ժով պիտի հայ ցաւը մեղմի:

«Տե՛ս, արիւնները դեռ չի ցամքեցան . . .

«Այնքա՛ն բազում է մեր կորուստն այսօր.

«Սգաւոր դարձած է ողջ Հայաստան.

«Սուգ առթողին դէմ դեռ մնա՛մ ք անգոր:

«Ահ, ի՛նչ փրփրում, ի՛նչ մոլեգնութիւն,

«Ինչո՛ւ կաշկանդուած, ստոր, գետնագարշ,

«Եւր արիւն թուրի դեռ պատիւն հայուն . . . :

«Ելբ՝ հայ մայր, եղբայր, քոյր՝ կան աղէխա՛րշ:

«Ո՛ւր ձեր հայրը, ո՛ւր ձեր մայրը,

«Ամէն ինչ լո՛ւռ է. չիբի՛մք սոսկ խօսին,

«Ո՛ւր է ձեր քոյրը, ո՛ւր է ձեր եղբայրը,

«Հոգիներու մէջ վրէ՛ժք բորբոքին:

«Բոլոր հայութիւնն կը խօսի ինձմով,

«Ահ, պարտաճա՛ծ եմ, շատ չեմ ճառելու,

«Կարմիր ուղին է յաւէտ ապահով,

«Ո՛վ հայ, կարմիրն միշտ եղիր հլու:

«Վե՛ր կաց, ակնարկէդ թող գետինք դողան

«Ու ծիւր տեսութիւնք հրդեհալառին .

«Սուրդ չա՛տ ու չա՛տ ծարաւ է արեան,

«Պատեանը լինի միշտ կողը վատին:

«Ահա այդ ուղին՝ հու՛ր . . . մնաք բարեա՛ւ . . . »

Ու ես վերացած էի ինքերմէջ,

Ինէ գացած էր կոտտացնող ցա՛ւ,

Վրե՛ժի հոգին ծընե՛ր յիս անշեջ . . . :



Քանզի տե՛ս, դեռ երդիկները կը մխան, դեռ դաշտերը կը կարմրին և տարագիրները կը հեծեն...

Ահ, լսէ՛ և փրփրէ՛ դեռ անարատ, թանկագին և նուիրական Հայունհին՝ Միւսլիմէ՛ կը կոչուի:

Կոտրէ՛ այդ դաշնակը, հրաժեշտ տուր կոյսին, խորտակէ՛ սենեկիդ որմերը, դարչապարիդ տակ փչրէ և գրիչը:

Դամբանէ՛ և սուգ և վիշտ և արտասուք:

Եւ սլացի՛ր...

Բայց դէպի ու՛ր...

Տե՛ս, հարիւր հազարաւոր ասլոող նահատակներ՝ քիւրաւոր զիականքու վրայ՝ յաւերժական յուսահատութիւնը կ'ողբան...

Տե՛ս և զարհուրէ՛...

Ահա՛. արեան գետ մը առջևդ, հետեւէ՛ իւր հոսանքին:

Սակայն, կանգ ա՛ռ պահ մը այդ հոսանքին առջև. հոտուտէ այդ արիւնը, հոտուտէ այդ զիականքը, քննէ այդ հառաչանքը:

Ինչ արբեցուցիչ և սրտաճմլիկ տեսարան:

Ինչ մորմոքիչ և ցնորական խորհրդածութիւն:

Նահատակ ցեղիդ՝ միլիոնաւոր զոհերուն նշխարներն են անոնք:

Նուիրական աւանդ և ցասումի ասղանիչ:

Յեղիդ՝ քիւրաւոր, ու քիւրաւոր ջարդուածներուն մտածումը երազը և հոգին է որ կը հոսի այդ հարմիր հեղուկին ընդմէջէն:

Վրէժի, վրէժի, վրէժի, ամենաստոյգ խորհրդանշան:

Այս գիշեր ուխտի և մեկնումի գիշերն է ո՛վ Հայ:

Անցի՛ր այդ ծով առ ծով արիւնէն լեռ առ լեռ զիականքէն և վե՛ր առ ճակատդ:

Հա՛, ես կը վստահիմ որ նա՛ շանթակօծ երկինքէ մը աւելի պիտի ամպրոպէ,

Ահ, բռունցքդ վե՛ր լարէ, և նա՛ թո՛ղ իբրեւ մահացու մի լախտ իջնայ և քեզ անսաստող սուրին և ցեղիդ մահավըճիւղ երկնող գանկին վրայ:

Վե՛ր առ բազուկդ և մի՛ խնայեր, մի՛ խնայեր, մի՛ խնայեր:

Թող քու շանթացումիդ առջև երկնից փայլակները ամօթահարին և դժոխոց սանդարները զարհուրին:

Բռունցքդ վե՛ր և թող չողայ՝ ան, արեւելքէն արեւմուտք:

Որովհետեւ նա մի ատեն Գանգէսէն մինչև Դանուբ աստուածացաւ,

Եւ մեծագոյն վեհապետներ՝ զայն իրենց աստուածներուն աստուածը դաւանեցին:

Նա՛ ընդմիշտ՝ լնդվզումի և անկախութեան խորհրդանշանը մնաց:

Նա՛ յաւիտեան փողոքի, արդարութեան և իրաւունքի կուռքը արձանացաւ:

Յարգել տու՛ր բռունցքդ, պաշտե՛լ տուր զայն և թող անարժան ոսթոյ՝ անոր ամենութիւնը անգամ մը ևս ճաչակէ:

Այդպէ՛ս կը պահանջեն՝ աւաղող հայ—կոյսերը, սգաւոր հայ—մայրերը. հառաչող հայ որբերը:

Հայ՝ ընկեր թող այս աղիողորմ ճիշերուն մէջ հոգիդ ցընցուի և վայրենանայ:

Թող քու երակներուն մէջ, արեան տեղ՝ հայկապանց ասպետական հուրը բոցավառ:

Կոհակ առ կոհակ հոսի, և վրէժ առ վրէժ փայլատակի:

Օ՛հ ուրեմն անմահացած ցեղի մը վերջին շառաւիղները դիւցազուն,

Ձեր բոլո՛ր անաւորութեամբ, ձեր բոլո՛ր մոլեգնութեամբ, ձեր բոլոր ցասումով և ձեր բոլո՛ր վրէժով:

Յաւերժականօրէն ոտքի՛...





«Գեղար Կովկաս, դեպի Հայաստան, դեպի Տաճարն Ազատութեան»

.. . . .

Որք կը կանգնեն ահա Տաճարն Անկախութեան Աստուծոյն . . . :

Պիտի երթամ քար մըն ալ ես հաստատելու հիմանց վրայ, Ոգի տալու աիւնովս ծաղիկներուն կիսաթառամ:

Պիտի երթամ Հայ անունին վրիժաբորք Տաճարին մէջ,
— ուրկէ ժայթքած բոսոր բոսոր աստղացումներ կը շանթանան — :

Պիտի երթամ, Հայ քաջի մը ոսկորէն՝ սո՛ւր դարձնած ինձի — որուն վրայ դեռ կը շողայ յիշատակ մը ասպետական — :

Պիտի երթամ, իմ մեկնումի և նուիրման ահեղ ուխտս մոնչելո՛ւ . . . :

[«Նոր Գողթան» է՛ն երկու տող]



2013

13117

